ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

***Քաղաք*** ***25.12. 2015 թ. ժամը 12.00***

Նախագահում էր մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 84-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Անդրանիկ Հակոբյանը, Կարեն Հակոբյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության գլխավոր մասնագետ Վարդուհի Հովհաննիսյանը:

**Օրակարգում՝**

1. 2015 թվականի դեկտեմբերի 21-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2015 թվականի գյուղատնտեսական ցուցանիշների ամփոփման մասին:

   /Զեկ. Վանիկ Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

3. Սևանա լճում ձկան ձվադրման հետ կապված ձկնորսության արգելման աշխատանքների իրականացման մասին:
   /Զեկ. Համբարձում Համբարձումյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ /

4. Այլ հարցեր:

**Հայտարարությունով հանդես եկավ՝**

Յուրա Մուշեղյանը - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ

**Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:**

1. **Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝**

1) ամենօրյա աշխատանքներ տանել համայնքների 2015 թվականի բյուջեների սեփական եկամուտների /հողի հարկ, գույքահարկ, հողի և գույքի վարձակալությունից եկամուտներ/ հավաքագրման ու աշխատավարձերի գծով կուտակված պարտքերը մարելու ուղղությամբ և մինչև տարեվերջ ապահովել դրանց տարեկան ցուցանիշները.

2) մինչև տարեվերջ համայնքների 2016 թվականի բյուջեների նախագծերը ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏԶ վարչություն.

3) մարզի համայնքների բնակիչներին, գյուղացիական տնտեսություններին տեղեկացնել տրամադրվող պարարտանյութի, սերմացուի, դիզվառելիքի մասին և մինչև 2016 թվականի հունվարի 20-ը մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն ներկայացնել դրանց անհրաժեշտ քանակի մասին հայտերը.

4) ակտիվ աշխատանքներ տանել ազգաբնակչության հետ՝ ձկան ձվադրման բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով Սևանա լճում ձկնորսության արգելքի գործընթացը պատշաճ իրականացնելու համար:

2. **ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 20-ի N 220-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին /նախագահ Դերենիկ Հովհաննիսյան/՝** շարունակել հսկողություն իրականացնել ձկան ձվադրման բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով Սևանա լճում ձկնորսության արգելքի հետ կապված գործընթացի նկատմամբ և պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ